



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 12 ՓԵՏՐՈՒՐ, 2024

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վերախ խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 55

## ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ԶԵՌՔՈՎ ՄԱՏՆՈՒԱԾ ՄԱՐԴՈՒՆ ԱՂՈԹՔԸ

Ականջ Կուր աղօթքիս, ով Աստուած, խնդրանքս մի անպետեր:

Նայէ ինձի եւ պարասխան Կուր. հոգիս քրքում կ'ալեկոծի եւ խռովքի կը մաքնուիմ՝ թշնամիին սպառնալիքներէն եւ ամբարիշտներու Կուր անդուծութիւններէն. որովհետեւ անիրաւութիւն կը թափեն գլխուս, եւ բարկութեամբ ոյս կը պահեն ինձի դէմ: Միրքս քազնապի մէջ է, մահուան սարսափը պարտէր է գիս:

Ահ ու դողը բռնէր է գիս եւ սոսկումը գիս համակեր:

Երանի թէ աղանիսի պէս թեւ ունենայի, հեռու թռչէի, հանգիստ գտնէի:

Այո, հեռու՝ հեռու փախչէի, անապարը բնակէի:

Շուրով ինձի ապաստան գտնէիսարիկ հովն ու փոթորիկէն:

Խառնէ, ով Տէր, բաժնէ անոնց լեզուները, որովհետեւ քաղաքին մէջ միայն վայրագութիւն եւ հակառակութիւն կը տեսնեմ, որոնք անոր պարսկաներուն վրայ կը շրջին օր ու գիշեր, եւ գայն կը լեցնեն յանցագործութեամբ ու դժբախտութեամբ, գայն կը լեցնեն աւերածութեամբ: Բռնութիւնն ու նենգութիւնը անպակաս են անոր հրապարակներէն:

Բայց ան՝ որ գիս կը նախարէ՝ թշնամի մը չէ, այլապէս դիրաւ պիտի տանէի. ան որ գիս կ'արհամարհէ՝ ոտիս չէ, այլապէս հեռու պիտի մնայի:

Ահ՝ դուն ես, ով մարդ, իմ հաւասարս, դուն՝ իմ ընկերս, իմ մտերիմս, որուն հետ մենք անոյշ-անոյշ գրոյց կ'ընէինք, եւ միասնաբար Աստուծոյ Կուր կ'երթայինք:

Թող մահը զանոնք անակնկալի բերէ, ողջ-ողջ իջնեն մեռելներու աշխարհը, որովհետեւ չարիքներով լեցուն են իրենք, ինչպէս իրենց բնակարանները:

Բայց ես գ'Աստուած օգնութեան կը կանչեմ, եւ ինք՝ Տէրը, պիտի փրկէ գիս:

Երեկոյեան, արշալոյսին, թէ կ'եսօրին, կը բողոքեմ ու կը հեծեմ, եւ Տէրը կը լսէ իմ կանչս, գիս անվնաս դուրս կը բերէ ինձի դէմ մղուած յարձակումներէն. եւ այնքան շար են ինձի ընդդիմացողները:

Աստուած, որ իր գահին բազմած է սկիզբէն ի վեր, կը լսէ գիս, եւ պիտի նուաստացնէ անոնք՝ որոնք դարձի չեն գար եւ Աստուծմէ չեն վախնար:

Իմ ընկերս հարուածեց իր բարեկամները, եւ իր դաշինքը խախտեց:

Անոր բերնէն մեղր ու կարագ կը թափի, բայց սրտին մէջ ոյս ունի:

Խօսքերը կակուղ են՝ իողի պէս, սակայն սուր են՝ դաշոյնի պէս:

Քու հոգերդ Տիրոջ ձգէ, եւ ինք պիտի հոգայ քեզ, բնաւ պիտի չձգէ որ արդարը սասանի:

Այո, ով Աստուած, արիւնահեղ ու նենգաւոր այս մարդիկը դուն կորուստի գուրը նետը՝ դեռ իրենց կեանքի կեսին չհասած:

Իսկ ես՝ քեզի կը վստահիմ:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենաստօր Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ սպաւէն եւ նեղերոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



## ՍԱՂՄՈՍ 55

### ԸՆԿԵՐՈՉ ՍԸ ՁԵՌՔՈՎ ՄԱՏՆՈՒԿԾ ՄԱՐԴՈՒՄՆ ԱՂՕԹՔԸ

Բնական մարդու մը բնական արտայայտությունն է, այն ինչ մեզի կը ներկայացնէ Դաւիթ իր կեանքի փորձառությունը եւ հոգեվիճակը պարսմելով 55րդ Սաղմոսի ճամբով: Որքան ալ ըսենք հաւարքով ենք, կը վարահինք, գորաւոր ենք, բայց ահա պահեր կան, պահեր կրնան ըլլալ ու գան, ուր բնական ներքին հոգեվիճակի մը մէջէն կրնանք անցնիլ, եւ այդ մէկը ցոյց կու տայ մեր մարդկային բնութիւնը: Որովհետեւ վերջ ի վերջոյ պէտք չէ մոռնանք, որ մարդ արարածներ ենք, հողեղէն, մահկանացու: Երկրորդ, այս հոգեվիճակները կը պարահին, որպէսզի նաեւ ստովինք որ մենք մեզի չենք կրնար վարահիլ: Որքան ալ գորաւոր ենք, ահա պահեր կան ուր մեզ կը մարսեն խռովքի, մեզ կը մարահոգեն: Բայց նաեւ զգոյշ պէտք է ըլլալ, որ այս երեւոյթը շար ալ իշխող պէտք չէ ըլլայ, այլապէս՝ այս անգամ մեզ կը փանի յուսահատութեան գիրկը: Ահա այդ երեւոյթը չորհրելու համար, Դաւիթ անմիջապէս կ'անդրադառնայ եւ կ'ըսէ. «Բայց ես զԱստուած օգնութեան կը կանչեմ, եւ ինք՝ Տէրը, պիտի փրկէ զիս: Տէրը կը լսէ իմ կանչս, զիս անվնաս դուս կը բերէ»: Եւ իր կեանքի փորձառութեամբ ալ օրինակ կ'ուզէ ըլլալ այսօր ինձի եւ քեզի ըսելով. «Քու հոգեղ Տիրոջ ձգէ, եւ ինք պիտի հոգայ քեզ, բնաւ պիտի չձէ որ արդարը սասանի»:

Դաւիթ հալածական է, րեղէ րեղ կը թափառի, կը փախչի, որպէսզի ազատի զինք հալածողներէն: Իր միակ ու մնայուն խօսակիցը Աստուած, որ ահա աղօթքի ճամբով Իրեն կը դիմէ եւ իր փրկությունը Աստուծմէ կը սպասէ: Բայց բնական է, երբ նեղությունն ու հալածանքը այնքան կը սաստկանան, որ ալ կարծէք համբերությունը կը հափնի, օրերը կը սկսին աւելի երկար թուիլ, դժուարությունները անլուծելի կ'ըլլան: Եւ ահա այս փազնապին մէջ, Դաւիթ առաւել եւս հետամուտ է, այրի կնոջ նման, «Դաբս րես» արտայայտութեամբ: Դաւիթ Տէրը կը դաւանի որպէս փրկիչ, եւ ահա այդ դաւանութեան դիմաց կը խնդրէ ըսելով. դուն որ փրկիչ ես, ուրեմն փրկէ զիս: Դուն որ հօգօր ես, պաշտպանէ զիս: Դաւիթ կ'ուզէ այդ դաւանությունը գործնականօրէն փեսնել: Առաւել եւս, կը խնդրէ որ Աստուած լսէ իր աղօթքը, այնպէս չըլլայ, որ կարծէք լսող մը չկայ: Ականջ փութ եւ խնդրանքս մի անփեսեր: Որովհետեւ հոգին կ'ալեկոծի եւ խռովքի կը մարսուի: Պարճառ. թշնամիին սպառնալիքներէն, ամբարիշտներուն նեղություններէն, եւ անիրաւութիւն կը թափեն իր գլխուն, եւ բարկութեամբ ոյս կը պահեն: Ահա այս կացութեան մէջ սիրտը կը փազնապի, մահուան սարսափը կը պարտէ զինք, ահ ու դողի բռնուած: Ահա մարդու բնական հոգեվիճակը, որուն մէջէն անցաւ նաեւ մեր Տէրն ու փրկիչ Յիսուս Քրիստոս, իր մարտութեան գիշերը Գեթսեմանիի պարտեզին մէջ, այսպէս արայարուելով. «Հոգիս մահու չափ փրկում է»: Ահա թէ ինչո՞ւ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Հերեւաբար, ամուր պահենք մեր դաւանած հաւաքը, որովհետեւ հիմա երկինքի սրբարանը մարտ մեծ Քահանայապետ մը ունինք, Յիսուսը, Աստուծո Որդին: Քահանայապետ մը, որ կրնայ հասկնալ մեր փրկությունները եւ կարեկցիլ, քանի ինչ բաներով որ մենք կը փորձուինք՝ ինք եւս փորձուած է, առանց սակայն մեղանչելու: Ուստի համարձակօրէն մօտենանք Աստուծոյ շնորհքի աթոռին, ողորմություն գրնելու եւ շնորհք սրանալու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անիրաւութեան պարագային» (Եբր 4:14-16):

Դաւիթը կը թուէ ի՞նչ վիճակի մէջ որ է: Այսինքն՝ ի՞նչ բանի որ կարիքը ունի թշնամիին սպառնալիքը եւ ամբարիշտներուն փութ նեղությունները եւ այդ բոլորէն դուրս գալու: Կը յիշեցնէ Քրիստոսի այն հարցումը երբ պարագան կը մօտենար եւ կը խնդրէր բժշկություն, Քրիստոս կը հարցնէր. «Ի՞նչ կ'ուզես, որ ընեմ քեզի համար»:

Դաւիթ կը փափաքի որ աղանիի նման թելեր ունենայ եւ հեռուները թռչի ու իր հանգիստը գրնէ: Մենք ալ յաճախ կ'ունենանք այնպիսի իրավիճակ, ուր այնքան կը ծանրանայ նեղությունը եւ կու գայ պահը մենք ալ կը փափաքինք հեռու փախչելու կացութենէն: Բայց խորքին մէջ կացութենէն փախուստ փալը մի գուցէ պահ մը, ժամանակաւոր հանգիստ գրնես, բայց հարցին լուծումը չէ: Հարցը փակաւին հոն է: Ընդհակառակը, խոնարհութեամբ խնդրելու Աստուծմէ, որ «Խառնէ ու բաժնէ անոնց լեզուները» ինչպէս խառնեց Բաբելոնի աշտարակաշինութեան ժամանակ լեզուները: Լեզուները խառնել կը նշանակէ անհամաձայն ըլլան, անմիաբան: Որովհետեւ անոնք միաբանած են Դաւիթի դէմ եւ կ'ուզեն սպաննել զինք: Նաեւ անոնք քաղաքին մէջ վայրագություն, հակառակություն, յանցագործություն եւ ատրուածութեամբ կը լեցնեն, բռնություն եւ նենգություն, որպէսզի անոնց ծրագիրը խափանուի:

Դաւիթ կը շարունակէ, եւ այս անգամ կը ներկայացնէ, որ զինք նեղողը հալածանքը չէ, այնքան որքան որու կողմէ հալածուիլը: Մէկու մը, որ այնքան սիրելի, մէկու մը, որ միասին Աստուծոյ փունը կ'երթային եւ զԱստուած կը պաշտէին: Իր մտերիմ ու հարազատ: Երեւոյթ մը, որուն մէջէն կ'ացնինք, ուր շաք աւելի կ'ու գացնէ երբ հարուածը կ'ու գայ ոչ թէ օտարի մը կողմէ, այլ նոյնինքն հարազատի մը կողմէ: Որովհետեւ երբ թշնամին օտար է, միշտ ալ պատրաստ ենք որեւէ ժամանակ հարուած ստանալու, անոր համար ալ զարմանալի չթուիր, որովհետեւ փրամաբանական է, որ թշնամին ուրիշ բան պիտի չընէ եթէ ոչ հարուածէ: Բայց շաք աւելի ծանր է, որուն երբեք ալ պատրաստ չենք, որովհետեւ այդ ուղղութեամբ երբեք ալ ակնկալութիւն չունինք, այլ ընդհակառակը՝ վստահութիւն ունինք մեր հարազատին, ընկերոջը, բայց ահա հարուածը կ'ու գայ նոյնինքն այդ հարազատէն:

Ահա Դաւիթ այս կացութեան մէջ կը խնդրէ, որ Աստուած վերջ փայ այս բոլորին, բայց կարծէք անոր խնդրանքը փարօրինակ կը թուի երբ կ'ըսէ. «Թող մահը զանոնք անակնկալի բերէ, ողջ-ողջ իջնեն մեռելներու աշխարհը», բայց ինչո՞ւ, որովհետեւ չարիքներով լեցուն են իրենք: Այսինքն՝ մահը վերջ փայ այդ չարիքներուն: Իսկ Դաւիթ կը վերադառնայ եւ իր վստահութիւնը եւ յոյսը կը յայտնէ, որ Աստուած պիտի փրկէ զինք եւ պիտի լսէ իր կանչը եւ զինք դուրս բերէ իր դէմ մղուած յարձակումներէն: Բայց րեսէք, յաջորդող համարներով, Դաւիթ ետ կը վերադառնայ դարձեալ խօսելու իր ընկերոջը հասցուցած հարուածին մասին, եւ կը նկարագրէ ըսելով. «Դաշինքը խախտեց, խօսքերը մեղր կարագի նման, բայց սրտին մէջ ո՞ր կայ: Խօսքերը իղի պէս կակուղ, բայց սուր դանակի նման»:

Բայց Դաւիթ ինքզինք կը քաջալերէ, ինչպէս նաեւ ուրիշները ըսելով. «Հոգերդ Տիրոջ փութ, եւ Ան պիտի հոգայ, եւ բնաւ պիտի չձգէ, որ արդարը սասանի»: Այո, կացութիւն մը, որ դժուար փանելի, մի գուցէ անբուժելի հիւանդութիւն աւելի դուրին փանինք, քան այն հարուածը որ կ'ու գայ հարազատ մը, բայց որպէսզի կարենանք յառաջ երթալ, յանձնենք մեր հոգսերը Տիրոջ եւ ամբողջութեամբ վստահինք Իրեն որպէսզի մեզ դուրս բերէ այդ վիճակէն:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*